

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան
պետական համալսարան» հիմնադրամի
գիտական խորհրդի

2020 թվականի հոկտեմբերի 6 թիվ 03 նիստում

Գիտական խորհրդի նախագահ՝ _____ Ն. Ավետիսյան

Մարքեթինգային ռազմավարության հայեցակարգ

ՇՊՀ մարքեթինգային ռազմավարության հայեցակարգը մշակվել է ԳՊՄԻ զարգացման ռազմավարական պլանի (2015-2019) հիման վրա:

ՇՊՀ առաքելության իրականացման համար մշակվել է մարքեթինգային ռազմավարություն, որի նպատակն է բարձրացնել և ամրապնդել համալսարանի վարկանիշը տարածաշրջանում, որպես կրթական և գիտական գործունեություն ծավալող կազմակերպություն:

Մարքեթինգային գործունեությունը ծավալելիս՝ ՇՊՀ-ն հաշվի է առել արտաքին և ներքին շահառուներին՝

- Դիմորդներ
- Ուսանողներ
- Դասախոսներ
- Համալսարանի այլ աշխատակիցներ
- Ծնողները
- Ունկնդիրներ
- Կազմակերպություններ՝ առևտրային և ոչ առևտրային(հայկական և արտասահմանյան)
- ԿԳՄՍ նախարարություն և կրթության առնչվող այլ հաստատություններ

Իրականացնելով շուկայի հետազոտություն՝ ՇՊՀ-ն առանձնացրել է մարքեթինգային ռազմավարության հետևյալ նպատակները՝

- ՇՊՀ վարկանիշի բարձրացում,
- Ներքին և արտաքին շահառուների հետ հաղորդակցության ուղիների բարելավում
- Մարքեթինգային գործիքների բարելավում և ներդրում

ՆՊԱՏԱԿ 1. ՇՊՀ վարկանիշի բարձրացման համար առանձնացվել են հետևյալ չափանիշները

- ՇՊՀ կրթական գործունեություն,

- Գիտահետազոտական գործունեություն,
- Միջազգային տեսանկյունից,
- ՇՊՀ բրենդ,
- Նորարարություններ:

Կրթական գործունեության բարելավման համար ՇՊՀ-ն իր առջև դրել է հետևյալ խնդիրները՝

- Պարբերաբար հավաքագրել կրթական գործընթացի արդյունավետության վերաբերյալ ուսանողների, շրջանավարտների և գործատուների շարունակական արձագանքները,
- Ուսումնասիրել և վերլուծել տեսական նյութի, գործնական աշխատանքների և պրակտիկայի կապը և համապատասխանելիությունը ժամանակակից աշխատաշուկայի պահանջներին,
- Ապահանովել կրթական վերջնարդյունքների ապահովման համար ուսանողների կողմից ընտրովի առարկաների առկայությունը,
- Պարբերաբար լրամշակել և համապատասխանեցնել մասնագիտական կրթական ծրագրերն աշխատաշուկայի պահանջներին,
- Ընդլայնել իրական բիզնեսի հետ համագործակցությունը:

Գիտահետազոտական գործունեության բարելավման համար ՇՊՀ-ն իր առջև դրել է հետևյալ խնդիրները՝

- Խրախուսել ՇՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի գիտահետազոտական գործունեությունը,
- Գիտահետազոտական գործունեության լուսաբանումը ՇՊՀ կայքէջում և այլ հաղորդակցման ցանցերում,
- Իրականացնել ամենամյա ներքուհական դրամաշնորհային մրցույթ,
- Իրականացնել այլ համալսարանների հետ համատեղ վերապատրաստումներ և առցանց դասընթացներ,
- Կազմակերպել տարբեր մասնագիտությունների գծով դասախոսների ակադմիական շարժունություն և փոխանակում,
- Կազմակերպել գործընկեր համալսարանների հետ գիտաժողովներ, քնննարկումներ՝ որպես փորձի փոխանակում,
- Պաշտոնական կայքէջում և սոցիալական ցանցերում լուսաբանել բաց դասերը և գիտական սեմինարները:

Միջազգային տեսանկյունից բարձրացնելու համար ՇՊՀ-ն իր առջև դրել է հետևյալ խնդիրները՝

- Մշակել օտարալեզու ՄԿԾ-ի մասնագիր և առարկայական նկարագրեր և տեղադրել պաշտոնական կայքէջում և ուղարկել գործընկեր արտասահմանյան համալսարաններին,
- Վերապատրաստել դասախոսներին՝ օտարալեզու ՄԿԾ իրականացնելու համար,
- Ապահովել ակադեմիական շարժունության մասնակիցների քանակի շարունակական ավելացումը,
- Մասնակցել միջազգային կրթական տոնավաճառ-ցուցահանդեսներին,
- Մշակել կրկնակի դիպլոմ ստանալու հնարավորությունը:

Բրենդի համար ՇՊՀ-ն իր առջև դրել է հետևյալ խնդիրները՝

- Ապահովել ՋԼՄ-ների ներկայությունը ՇՊՀ-ի կողմից կազմակերպված միջոցառումներին,
- Ապահովել համացանցում համալսարանական միջոցառումների առցանց հեռարձակումները,
- Սոցիալական ցանցերում պարբերաբար տեղադրել համալսարանի գործունեության մասին հոդվածներ,
- Կազմակերպել առցանց դասընթացներ հայերեն և օտար լեզուներով,
- Զարգացնել և ընդլայնել կրթական ծառայություններն արտասահմանցի ուսանողների համար,
- Կազմակերպել նախապատրաստական դասընթացներ դիմորդների համար,
- Ներգրավել ուսանողներին, շրջանավարտներին և դասախոսներին համալսարանի բրենդի ձևավորման աշխատանքներին,
- Ընդլայնել դպրոցների հետ համագործակցությունը,
- Խրախուսել լավագույն ուսանողներին:

Նորարարությունների համար համալսարանը իր առջև դրել է հետևյալ խնդիրները՝

- Ընդլայնել տեխնիկապես հագեցված լսարանների քանակը,
- Կազմակերպել նոր տեխնոլոգիաներով դասընթացներ,
- Խրախուսել նորարարական գիտահետզատական գործունեություն ուսանողների և դասախոսների շրջանակում
- Ստեղծել կրթություն- բիզնես կապը համալսարանի ներսում

ՆՊՍՏԱԿ 2. Ներքին և արտաքին շահառուների հետ հաղորդակցության ուղիների բարելավում

Համալսարանը իր առջև դրել է հետևյալ խնդիրները՝

- Ստեղծել ուսանողների և շրջանավարտների տվյալների բազա,
- Ստեղծել դպրոցների, քոլեջների տվյալների բազա,

- Ստեղծել առաջին կուրսի ուսանողների համար ուղեցույց,
- Ներդնել մենթորության գաղափարն ուսանողական կյանքում,
- Ընդլայնել մշակութային, սպորտային և հասարակական բնույթի միջոցառումները համալսարանում,
- Կազմակերպել պարբերաբար դպրոցական օլիմպիադաներ,
- Կազմակերպել մասնագիտական կողմնորոշման դասընթացներ,
- Կազմակերպել դիմորդների և այլ շահառուների համար բաց դռների օր,
- Մասնակցել պարբերաբար կրթական տոնավաճառ-ցուցահանդեսներին,
- Կազմակերպել անվճար դասընթացներ դիմորդների համար,
- Կազմակերպել լրացուցիչ վճարովի դասընթացներ ուսանողների և այլ հետաքրքրվող անձանց համար,
- Ներկայացնել համալսարանի կրթական ծրագրերը դպրոցներում,
- Կազմակերպել բաց դասեր և քննարկումներ հանրակրթական դպրոցների աշխատակազմի և աշակերտների համար:

ՆՊԱՏԱԿ 3. Մարքեթինգային գործիքների բարելավում և ներդնում

Համալսարանը իր առջև դրել է հետևյալ խնդիրները՝

- Կազմակերպել ներքին և արտաքին գովազդային արշավներ,
- Պատրաստել օտարալեզու գովազդային և տեղեկատվական հոլովակներ,
- Ստեղծել գործատուների բազա և պարբերաբար աշխատանքի առաջարկներ ուղարկել ուսանողներին և շրջանավարտներին,
- Ստեղծել ուսանողական ներքին ցանց,
- Ներդնել և գովազդել հեռահար ուսուցումը, որոշակի կրթական ծրագրերի հիման վրա
- Տեղադրել պարբերաբար համացանցում և ԶԼՄ-ներում գովազդային տեղեկատվական նյութեր,
- Ստեղծել ռեկտորի բլոգ,
- Կազմակերպել պարբերաբար կորպորատիվ միջացառումներ,
- Պատրաստել իմիջային ստենդներ,
- Ստեղծել առցանց համալսարանական շաբաթաթերթ,
- Ստեղծել հայերեն և օտարալեզու բուկլետներ և համալսարանում սովորելու ուղեցույցներ,
- Ստեղծել համալսարանի բրենդի բարձրացման համար հուշանվերներ,
- Շարունակաբար ընդլայնել և թարմացնել պաշտոնական կայքէջում տեղադրվող նյութերը՝ հայերեն և օտար լեզուներով,

Համալսարանում արդյունավետ մարքեթինգային ռազմավարությունն իրականացնելու համար խնդիր է դրվել մշակել

- Մարքեթինգային պլան՝ ըստ ժամանակացույցի,
- Գովազդային ռազմավորություն,
- Հասարակայնության հետ կապերի ռազմավարություն,
- Համասարանի իմիջի ձևավորման քաղաքականություն:

Ինչպես նաև իրականացնել՝

- Ուսանողների և շրջանավարտների զբաղվածության վերլուծություն,
- Աշխատաշուկայի պարբերաբար ուսումնասիրություն,
- Կրթական ծառայությունների վաճառքի ծավալի ուսումնասիրություն,
- Ուսանողների ուսուցման բավարարվածության ուսումնասիրում,
- Հաալսարանի ուսանողի, դիմորդի, շրջանավարտի սոցիալ-հոգեբանական նկարագրի ուսումնասիրություն: